ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ
(Բասենի գավառ)

Հ. Գ. ՁԱՏԻԿՅԱՆ

Բասենը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից է: Այն եղել է փասիաններ, բասիաններ, բասեր ցեղախմբի հայրենիքը: Բասենի մասին հիշատակություններ է թողել Քսենոփոնը: Նահանջող հույները, հասնելով Արմենիա երկիր, խալյուբների երկրից «յոթ կայան՝ օրական հինգ փարսախ» անցնելով, մոտենում են Փասիս գետին, այնտեղից ստաջ են շարժվում, բայց լեռանցքին չհասած, «դեպի դաշտ իջնելիս նրանց դեմ ելան խալյուրները, տաոխները, փասիանները»[1]:

Քսենոփոնը վկայում է նաև, որ այդ երկրները գտնվում էին Հայկական սատրապության մեջ, Տիրիբազոս հյուպարքոսի իշխանության ներքո: Փասիանները, որպես վարձկաններ, ծառայում էին հյուպարքոսի բանակում:

Նշված ժամանակահատվածում, գուցե դրանից էլ առաջ, Բասենը լայնածավալ, ավելի ընդարձակ է եղել, քան նրա սահմանները նկարագրում է «Աշխարհացույցը»: Արտաշեսյան հարստության ժամանակ նրա կազմի մեջ մտնում էին Վանանդը, Հավնունիք և Աբեղյանք գավառները (Կարսի և Մարիղամիշի շրջանները): Արշակունիների հարստության ժամանակ գավառից անջատվում են Որդունիների, Աբեղյանք, Գաբեղյանք, Հավնունիք նախարարական տները՝ կազմելով առանձին իշխանություն: IV դ., երբ Մամիկոնյան նախարարական տան դեմ սկսվում է Որդունիների պայքարը, Խոսրով Կոտակ թագավորը (331-338թթ.) դաժան դատաստան է տեսնում Որդունիների հետ, սրի է քաշում ամբողջ տոհմը՝ կալվածքները հանձնելով Բասենի եկեղեցական թեմին:

Հայ պատմիչները Բասենը անվանել են «հովիտ մեծ», «քաջ ընդարձակ հովիտ», «ընդարձակ դաշտ»: Բասենի գավառը տարածվում է Երասխի (Արաքսի) վերին և նրա ձախակողմյան Մուրց վտակի ավազաններում: Գավառը հարթավայրային բնություն ունի: Երասխի և Մուրցի միախառնման տեղում է գտնվում Յոթնակամար կամուրջը, որի կառուցումը վերագրվում է Վաղարշ Բ Արշակունի թագավորին (185-198թթ.):

Բացի Քսենոփոնից, գավառի մասին հիշատակություններ են թողել Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին, Հովհան Մամիկոնյանը, Հովհաննես Դրասխանակերտցին, Սեբեոսը, Արիստակես Լաստիվերտցին, ինչպես նաև արաբ և բյուզանդացի հեղինակները:

Գավառի կենտրոնը Վաղարշ Բ-ի հիմնադրած Վաղարշավանն էր: Գավառի եպիսկոպոսանիստը Որդորուավանն էր, որը գտնվում էր Աղբե-

---

[1] *Քսենոփոն*, Անաբասիս, Ե., 1970, էջ 99:

բականաց դաշտում և երբեմն նույնացվում է Դու գյուղի հետ, որտեղից անցնում էր 387թ. պարսկա-բյուզանդական սահմանը:

1048թ. Բասենը ենթարկվեց թուրք-սելջուկների արշավանքին: Այն 1555թ. Ամասիայի, 1639թ. Դիարբեքիրի պայմանագրերով ընկավ թուրքական տիրապետության տակ:

1829 և 1877թթ. Բասենը գրավվեց ռուսական զորքերի կողմից, բայց Ադրիանուպոլսի և Սան Ստեֆանոյի պայմանագրերով վերադարձվեց Թուրքիային:

Բասենի մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել բազմաթիվ հեղինակների աշխատություններում:[2]

ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվում (ՀՀ ՊԿՊԱ) 24, 25, 28, 29, 50, 54, 57, 94, 226, 227, 335, 374, 427, 431, 476 անգլիական արխիվներից ընտրված, ակադեմիկոս Ռ. Հովհաննիսյանի կողմից ՀՀ ՊԿՊԱ նվիրված Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Թ. Ազատյանի, Գ. Ատրպետի, Մ. Բերբերյանի, Վ. Եղիազարյանի, Հ. Ենիկոլոպովի, Պ. Սիմոնյանի, Գ. Սրվանձտյանցի և այլոց անձնական ֆոնդերում պահպանվող արխիվային փաստաթղթերը արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հետաքրքրություն ներկայացնող հարցի վերաբերյալ:

Երասխ գետը Բասենը բաժանում է երկու մասի՝ Ներքին և Վերին: Ներքին Բասենը նաև անվանվում է Ստորին, Վարի: Նրա սահմանները արևելքում հասնում են Ծաղկանց (Ալադաղ) լեռներին, հյուսիսում և հյուսիս արևելքում՝ Տայոց լեռներին, հարավում՝ Հայկական պարին: 1878-1917թթ. Ներքին Բասենը Կարսի մարզի կազմում գտնվում էր Ռուսական կայսրության տիրապետության տակ: 1918թ. թուրքական ավազակային հարձակումներից հետո և Բաթումի պայմանագրով այն զավթեց Թուրքիան կողմից:

Ներքին Բասենի մասին Հ. Կարնեցին գրում է. «Իսկ Ներքին Բասենն է պարոնանիստ և ունի գյուղաքաղաք զԽորասան առ յափն Երասխայ. և ունի բերդ Զիւին, Մէժէնկերտ և Կէչէվան. և է ի մեջ բերդին գերեզման Խաչատուր Կեչառացուն: Եւ այլ բազում գիւղք ունի և մայրիք, որ գնացեալ հասնէ մինչև ի Կարս, ի Պարտեզ և ի Սօղանլուն: Եւ անտի ի լեռանկողմն հարաւոյ են գաւառք երկու, որ ասեն Դարա Եազի և Խեալի Եազի. են բնակարան և յեայլանի քրթաց, որ հանապազ վրանաւ Կեղարու շրջին ոչխարօք և անասնօք ի լի, և գնացեալ հասանէ մինչև ի լեառն Սուկաւէտ»[3]:

---

[2] *Ղևոնդ Ալիշան*, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1813, *Ն. Սարգիսյան*, Տեղեկագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս, Վենետիկ, 1864, *Մ. Միրաքանյան*, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս…,մաս 1, 2, 3, Պոլիս, 1884, 1885, *Գ. Փիտոն, Ա. Տրվերե*, Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա, Վիեննա, 1892, *Հ. Էփրիկյան*, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, պր.1, Վենետիկ, 1900, *Հ. Կարնեցի*, Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, *Ղ. Ինճիճյան*, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1906, *Ա-Դռ*, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912, *Լինչ*, Հայաստան, հ. Բ,Պոլիս, 1914, *Հ. Քոսյան*, Բարձր Հայք, հ. Բ, Վիեննա, 1926, *Հ. Հակոբյան*, Ուղեգրություններ, հ. Զ, Ե.,1934, *Հ. Ոսկանյան*, Կարին և կարնեցին և Կարինի վանքերը, Վիեննա, 1950, *Ղ. Չարըգ*, Հուշամատյան Բարձր Հայքի, Կարինապատում, Բեյրութ, 1957:

[3] *Հ. Կարնեցի*, նշվ. աշխ., էջ 21: Ներքին Բասենի մասին տե՛ս նաև *М. Убичи*—

1880թ. գավառի 70 բնակավայրերից 30-ը հայաբնակ էին: Դրանք գավառի ամենամեծ գյուղերն էին: Գավսաի կենտրոնը Խորասան ավանն էր: Գավառում էին գտնվում Ավնիկ, Ջվիկ, Բուքակ (Բերդակ), Խնձոր բերդերը: Հայաբնակ գյուղերից նշանավոր էին Ազաբը, Ալաջան, Աստվածածինը, Ախոն, Արտուղը, Ալվարը, Անտակը, Ավնիկը, Գեաիկը, Գոմաձորը, Խոզաղբյուրը, Գերեքը, Արմուտլուն (Տանձուտը), Բաշքեռյուն, Խլնոցը, Խոտիքը (Խատիք), Խոփերանը (Ծոփերան), Ծանը, Ծառսը, Կարաչուխան (Ղարաչուխա), Կարաքիլիսեն (Ղարաքիլիսեն), Կոտաբազը, Հակոբգոմքը, Ջիթհանքը, Սանամերը, Նորակը, Յուզվերանը, Չովրուկը (Չյուրուկ), Ջերմիկը, Պեարեվանքը և այլն:

Ավնիկ բերդը ունեցել է ամուր պարիսպներ, ինքնիշխան քաղաքի կարգավիճակ: 1051թ. Տուղրիլ բեկը չկարողացավ գրավել բերդաքաղաքը, իսկ Լենկթեմուրը միայն մեկամսյա պաշարումից հետո կոտրեց պաշտպանների դիմադրությունը: 1049թ. գավառի Աջահովիտ վայրում, որը գտնվում է Կարգաբազար լեռների ստորոտում, հայ, վրաց և բյուզանդական ուժերը ճակատամարտ տվեցին սելջուկների դեմ: Այս ճակատամարտը հայտնի է Բասենի ճակատամարտ անունով: Հնագույն պատմություն ունեն նաև Ալվար և Գոմաձոր գյուղերը, Ավկամ կամ Ոկոմի գյուղավանը, Բլուր (Բլուրք) գյուղը: Առաջինը անշուք և փոքր բնակավայրերի վերածվեց 1021թ. բյուզանդական և 1054թ. սելջուկյան ավերիչ արշավանքներից հետո:

Վերին Բասենը տափարակ է, դաշտավայրային: Նրա միայն հյուսիսային շրջաններում կան ծառածածկ տարածքներ: Վերին Բասենը համընկնում է պատմական Գարեղյան գավառին, որը X դ. բաժանվել է Բասենից և անվանվել Վանանդ: Գավառը հայտնի է սառնորակ աղբյուրներով ու արգավանդ հողերով, որոնք բարձր բերքատվություն ունեին, և այդ պատճառով էլ Բասենը համարվում էր Կարինի նահանգի շտեմարանը: Այն վայրում, որտեղ Մուրց գետը թափվում է Արաքսի մեջ, կան 30-40 աստիճան տաքության ջերմուկներ: Ջերմուկների գոյության պատճառով, հատկապես ամառային ամիսներին, գավառը դառնում էր հովեկների ու հիվանդների բնակատեղի:

Վերին Բասենի մասին Հ. Կարնեցին գրել է՝ Սամրվանից «ուղիղ դէպ արեւելս, է երկիրն Վերին Բասենոյ բազում գիւղ և աւանք. և ունի ծաղկաւէտ լերանք ջրալից և տուն հացի, անասնօք և ոչխարօք ի լի, իւղ և մեղր իբրև աղբիւր, գեղեցիկ և վարժ քէհլան երիվարք բազում, որ տեսողացն հիացեալ փառս տային Աստուծոյ, նաև գեղեցիկ շինեն դոյլ և կուժ փայտեայ զանազան, յոյժ օգուտ և ախորժ է ըմպողաց ջուր ի նմանէ. և են բնակիչք երկրին հայ, և թուրք սակաւ. և ունի մեծ բերդ պարսպաւոր ի վերայ վիմի հաստատեալ, որ հայ բարբառով կոչեն այժմ Դորոնք, և թուրք բարբառով Հասան-Ղալա կոչի. անցանէ գետն Արազ ընդ դուռն քաղաքին, և է առ յափն ջրոյն ջերմ ջուր, որ է յոյժ ցաւոց և ախտաժետաց օգտակար

ни, Изображение современного состояния Турции, СПб., 1854; *А. Гишиус*, Статистические таблицы вилайетов Турецкой империи, Тифлис, 1889; *Г. Гроте*, По Азиатской и Европейской Турции, М., 1904; *Р. Бекгулянц*, По Турецкой Армении, Ростов н/Д., 1914; *А. Новичев*, Очерки истории Турции до мировой войны, М.—Л.,1937; *Д. Завриев*, К новейшей истории северо — восточных вилайетов Турции, Тифлис, 1947.

է մտելոցն ի ջուրն. և ելանեն ձկունք անթիւ և ազգի ազգի համեղ ճաշակողացն: Եւ է բերդս այս մեծ պարոնանիստ և հեծելօք ահաւոր խմբող ի պատերազմի... և ունի սինօռ Բասենս այս վերին մինչև ի Զարափխանան և ի Կաղզուան և ի Թարգմանն»[4]:

Գավառի կենտրոնը Հասանկալան է: Երբեմն Վերին Բասենը կոչվել է նաև իր կենտրոնի անունով: Կան կարծիքներ, որ բերդը կառուցել է Գրիգոր Մագիստրոսի ազգական Հասան իշխանը: Իրենց հակապատմական հավատամքին հլու թուրք պատմաբանները պնդում են, թե բերդը հիմնադրել է ակ-կոյունլուների ցեղապետ Ուզուն Հասանը (XV դ.):

Հասան-Կալա բերդը կառուցված է սեպի տեսք ունեցող լեռան վրա, կրկնակի պարսպապատված է եղել: Հաճախ բերդը նույնացնում են Վաղարշավան քաղաքի հետ, որի կառուցման մասին Մովսես Խորենացին հաղորդում է հետևյալը. « Յետ մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսուն և երկու ամի հոմանուանն իւրոյ Վաղարշայ Պարսից արքայի: Սա շինէ աւան մեծ զտեղի ծննդեան իւրոյ 'ի վերայ ճանապարհին, ու 'ի գնալն մօր իւրոյ 'ի ձմերոց յԱյրարատ, յանկարծակի պատեալ երկեանց 'ի գնացու՝ ծնաւ 'ի վերայ ճանապարհին, 'ի գաւառին Բասեան, 'ի տեղւոջ՝ ուր խառնին Մուրց և Երասխ, զոր շինեաց յիւր անուն, և կոչեաց Վաղարշաւան»[5]:

XIX դ. սկզբներին Վաղարշավան-Հասան-Կալան ունեցել է 1700 տուն բնակչություն: Գ. Սրվանձտյանցի տեղեկություններով (1879թ.), բերդաքաղաքում ապրել են 15 տուն՝ 130 հայեր:[6] Արխիվային մեկ այլ փաստաթուղթ, որը նույնպես արևմտահայ վիճակագրությունն է ներկայացնում, բայց անանուն է, վստահեցնում է, թե պատերազմից առաջ (1914թ.) բերդաքաղաքը ունեցել է 400 հայ բնակիչ:[7]

Մեկ այլ աղբյուր հայտնում է, թե գավառում 1878թ. եղել են 70 բնակավայրեր:[8] Նրանցից գրեթե 40-ը հայաբնակ էին: Զգալի թիվ էին կազմում խառը բնակչություն ունեցող գյուղերը, որոնք, մինչև 1877-1878թթ. պատերազմը, եղել են հայաբնակ, սակայն հայերի զանգվածային գաղթի, գյուղերում քրդերի, չերքեզների հաստատվելուց հետո գյուղերի ժողովրդագրությունը վտխվել էր: Վերին Բասենի նշանավոր գյուղերից էին Վաղավերը, Թորդանը, Ամրագոմը, Գեղավանքը, Թավունցը, Կամրջագեղը, Հարսնաքարը (Հարսնավեր), Միատունը, Խաչլուն:[9]

Գյուղերից շատերը բարեկեցիկ էին, բերքաշատ: Հայերը հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, արհեստներով ու առևտրով: Մինչև վիճակագրական տեղեկությունների վերլուծությանն ու համեմատությանը անցնելը, ընդգծենք, որ հատկապես 1877-1878թթ. պատերազմից հետո, թուրքական կառավարությունը ձգտում էր վարչական բաժանումների ու կեղծիքի ճանապարհով հայերի

---

[4] Հ. *Կարինեցի*, նշվ.աշխ., էջ 19-20:
[5] *Մովսես Խորենացի*, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1827,էջ 297:
[6] ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի արխիվ (այսուհետև՝ ԳՍ), ֆ. 153, գ. 23, թ. 14:
[7] ՀՀ ՊԿԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 45:
[8] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1,Ե., 1986, էջ 611:
[9] Հայկական Սովետական Հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 2, Ե., 1976, էջ 302:

թիվը ներկայացնել եղածից պակաս քանակով: Այս գործում մեծ դեր էին խաղում նաև հիշյալ պատերազմից հետո ստեղծված հալածական իրավիճակը, անօրինական հարկերն ու տուրքերը և բռնագրավումները, որոնց պայմաններում ձգտելով խուսափել հարստահարությունից, հայերը իշխանություններին չէին ներկայացնում իրենց ընտանիքների անդամների լրիվ քանակը: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Արեղին փաշան եվրոպական տերություններին ուղղված պատասխան նոտայում, ակնհայտորեն կեղծելով իրական տվյալները, հայանում էր, թե Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի, Սվազի վիլայեթներում անցկացված «պաշտոնական ցուցակագրությունը հետևյալ արդյունքն է տվել. հայերի թիվը ամբողջ բնակչության համեմատությամբ հասնում է 17 տոկոսի, մյուս ոչ մահմեդական համայնքներինը՝ 4 տոկոսի, իսկ մուսուլմաններինը 79 տոկոսի»[10]:

Հետևողականորեն իրականացնելով իր քաղաքականությունը՝ թուրքական կառավարությունը 1880,1888 և 1897թթ. կատարեց վարչական նոր բաժանումներ: Վերջին բաժանումից հետո Կարինի վիլայեթն ուներ երեք սանջակ (գավառ) և 19 գավառակ, որոնցից մեկն էլ Բասենի գավառակն էր:[11] Ա. Կոլյուբակինը հայանում է, որ Բասեն գավառն ուներ 200 բնակավայր, ընդամենը՝ 6496 տուն, որտեղից հավաքվել է 1772200 պիաստր աշար, բնակչությունը պահել է 26070 զլուխ խոշոր եղջերավոր, 223510 մանր եղջերավոր անասուններ, ունեցել է 4549 սայլ:[12] Դժվար չէ տեսնել, որ այս հեղինակը տառացիորեն կրկնում է թուրքական վիճակագրության ոչ ճիշտ տեղեկությունները: Սինչդեռ, Գ. Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գավառում ուսումնասիրված միայն 44 հայաբնակ գյուղերում պատկերը այլ էր: Համաձայն այդ վիճակագրության, գավառի 44 գյուղերում կային 1767 տուն հայեր, որոնց ընդհանուր թիվը կազմում էր 18714:[13] Ավելին, փաստաթղթերից մեկը (Անանուն հեղինակ) վկայում է, որ Բասենի գավառի 37 գյուղերում, որոնցից 21-ում կար հայ բնակչություն, XX դ. սկզբին ապրում էին 9210 հայեր:[14] Այսինքն, նշված ժամանակահատվածում Բասենի գավառում միջին հաշվով, ապրում էին 13-14 հազար հայեր:

Այժմ, վերոհիշյալ երկու արխիվային փաստաթղթերի օգնությամբ, վերծանենք պարզել գավառի գյուղերի քանակը: Համեմատությունից պարզվում է, որ Անանուն հեղինակի և Գ. Սրվանձտյանի գյուղացուցակներում հիշատակվում են նույն 12 գյուղերը: Սակայն, Անանուն հեղինակի մոտ բացակայում են Գ. Սրվանձտյանցի հիշատակած 32 գյուղերը, իսկ Գ. Սրվանձտյանցը չի արձանագրում Անանունի 25 գյուղեր: Տարբեր արխիվներից մենք հավաքել ենք գավառի 51 գյուղերի անուններ: Նրանցից վերը նշված աղբյուրներին համապատասխանում են միայն 26 գյուղերի անուններ: Այսինքն, 82 գյուղեր բացակայում են ներկայացված ցուցակներում (եթե իրար գումարենք երեք ցուցակներում բացակայող գյուղանունները, ընդհանուր թիվը կկազմի 82):

---

[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, g. 1, գ. 541, թ. 39:

[11] *Լ. Համբարյան*, Ազգարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Ե., 1965, էջ 38:

[12] *А. Колюбакин*, Материалы для военно–статистического обозрения Турции, Тифлис, 1890, с. 101.

[13] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, g. 1, գ. 139, թ. 45:

[14] ԳԱԹ ԳՍ, ֆ. 153, գ. 23, թ. 14:

Պատկերը նույնը կլինի, եթե փորձենք համեմատական վերլուծություն կատարել այլ աղբյուրների հաղորդած տեղեկությունների նկատմամբ: Այս խառնաշփոթի պատճառը պարբերաբար կրկնվող վարչական բաժանումներն էին, 1829, 1878թթ. զանգվածային գաղթերը, 1894-1896թթ. ջարդերը, հալածանքները, ավերումները, գյուղերի թուրքարնակ, քրդարնակ, չերքեզարնակ դառնալը, երևույթներ, որոնք ոչ միայն դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից, այլև վերոհիշյալ ժողովրդագրության փոփոխության պատճառով պարզապես չեն արձանագրվել շահագրգիռ հայ վիճակագիրների կողմից:

Գավառի գյուղերի ընդհանուր քանակը պարզելու նպատակով դիմենք ևս մեկ համեմատության: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» նշվում են գավառի որոշ գյուղերի անուններ:[15] Դրանց համեմատությունից պարզվում է, որ թվարկված անուններից Անանուն հեղինակի մոտ նշված չէ 12 գյուղերից և ոչ մեկը: Գ. Սրվանձտյանցը հիշատակում է միայն մեկ՝ Սանամեր գյուղը: Այսինքն՝ մեր ունեցած 82 գյուղանուններին պետք է գումարենք միայն Ներքին Բասենի 11 գյուղերի անուններ, Վերին Բասենի՝ 2, ընդհանուր արդյունք ունենալով 95 գյուղանուն:

Այժմ նման համեմատություն կատարենք ՀՍՀ ցուցակի հետ: Հանրագիտարանում ներկայացված են Վերին Բասենի 37 գյուղ, նրանցից միայն յոթն են կրկնվում Անանուն հեղինակի մոտ: Ստորին, Ներքին Բասենի հիշատակված 28 գյուղերից նույնանում են միայն չորսը: Գ. Սրվանձտյանցի ցուցակում Վերին Բասենում կրկնվում է 9 գյուղանուն, Ներքին Բասենում՝ ութ: Արդյունքում՝ Անանուն հեղինակի նշած երկու գավառակներում ավելանում է 54, Գ. Սրվանձտյանցի ցուցակում՝ 48 գյուղանուններ: Եթե գյուղերի մեր ունեցած թվին ավելացնենք Անանունի 54 գյուղերը, որովհետև Գ. Սրվանձտյանցինը արդեն հաշված է, ապա կունենանք 146 գյուղեր: Գաղտնիքն այն է, որ գյուղերի մեծ մասը տարբեր ժամանակներում ունեցել են տարբեր անուններ, ներգաղթած մահմեդականները, տեր դառնալով լքված հայկական գյուղերին, նրանց տալիս էին իրենց անվանումը: Բացի վերը նշվածից պետք է ընդգծել, որ հայ վիճակագիրները գրանցում էին միայն հայկական անվանումները, անուշադրության մատնելով գյուղերի մահմեդականացված անունները՝ չվտրձելով դրանց կողքին հիշատակել թեկուզ նախկին անվանումները:

Այժմ, երբ ի մի ենք բերել գյուղերի մասին տեղեկությունները, փորձենք տալ գավառի գյուղերի ամբողջական ցուցակը՝ նրա մեջ ընդգրկելով շարադրանքում հիշատակվող, ցուցակներում նշված, հայտնի հայաբնակ, խառը (բայց նախկինում հայաբնակ) գյուղերը.

Հասան դալե-գյուղաքաղաք		Թանըշման	-„-	Պաշգեղ	-„-
Հերթևգյուղ		Պետրե վանց	-„-	Ղարաքիլիսե	-„-
Թորդան	-„-	Կամուրջ	-„-	Բորիկ	-„-
Կյուլյու	-„-	Ղարաչուխա	-„-	Ճրասոն	-„-
Ալվար	-„-	Մեճելտի	-„-	Տոտի	-„-
Էզրմեկ	-„-	Հարս	-„-	Այիճիկրեկ	-„-
Պլղասուն	-„-	Կերեկ	-„-	Տելիպապա	-„-

[15] Հայաստանի և հարակից շրջանների..., հ.1, էջ 611:

Քլուր	-„-	Սանամեր	-„-	Խոսրովերեն	-„-	Սանսոր	-„-
Կատապաշ	-„-	Ցանցաղ	-„-	Ղրրլխ	-„-	Սոս (Սոսի)	-„-
Հազիպատ	-„-	Արմուրլի	-„-	Տարախոճա	-„-	Սուրբահան	-„-
Հարյուրատուն (Յուղվերան)	-„-	Ղարաքիլիսէ	-„-	Չիքեանք	-„-	Վաղժվան	-„-
Թոսե վերին	-„-	Թավլանճիւղ	-„-	Նորակ	-„-	Ուզուն Ահմեդ	-„-
Խաչ գեղ	-„-	Ներքին թաբխոճե	-„-	Չյուրյուկ	-„-	Քուռխիճ	-„-
Գոմաձոր	-„-	Խորասան	-„-	Պետրևանց	-„-	Օվակ[16]	-„-
Իշխան	-„-	Չրասոճ	-„-	Ջերմիկ	-„-	Կոտաբազ	-„-
Խոցավանց	-„-	Քեփենակ	-„-	Ախա	-„-	Արտուդ	-„-
Թավոնց	-„-	Անտակ	-„-	Ախոռճիկ	-„-	Դու	-„-
Հարսնեվար	-„-	Արտի	-„-	Ամբազոմ	-„-	Վաղավեր	-„-
Եղան	-„-	Արփաչայեր	-„-	Արուճազրակ	-„-	Խրտրրիլյաւ	-„-
Եկունի	-„-	Ղարախանչլար	-„-	Արտի	-„-	Ծվին	-„-
Պատիժված	-„-	Փոքիկ	-„-	Բլղասոն	-„-	Ղզլար	-„-
Ղալենաեր	-„-	Փիրալի[17]	-„-	Գեղավանք	-„-	Մշկի	-„-
Հաբան	-„-	Ազար	-„-	Դալար	-„-	Մաքսուդ	-„-
Ղրզլար դալե[18]	-„-	Ալաջա	-„-	Դիզկա (Դիզկի)	-„-	Փորսաղե	-„-
Սիջելի	-„-	Ախո	-„-	Էգեպատ	-„-	Աճալավ	-„-
Քեօփրուքեոյ	-„-	Աստվածածին	-„-	Թիմար	-„-	Քերդակ	-„-
Իլխու	-„-	Արմուտլու (Տանձուտ)	-„-	Ինս	-„-	Պայրաքդար	-„-
Վելիպապա	-„-	Արսաադ	-„-	Կեթիվան	-„-	Ղարափանչուր	-„-
Ալճակրակ	-„-	Գետիկ	-„-	Կնտեղի	-„-	Գզլճա	-„-
Աէքեաճուղ	-„-	Գերեք	-„-	Ճիճազրակ	-„-	Ղզլջերմիկ	-„-
Մաղարաճիւղ	-„-	Թոդևերան	-„-	Մասսադ	-„-	Գելընքար	-„-
Ըղրը պղրը	-„-	Խլնոց	-„-	Միատուն	-„-	Գեղուաճ	-„-
Իսլամձոր	-„-	Խոզաղբյուր	-„-	Մնղևան	-„-	Գեղվանք	-„-
Մասրրճիւղ	-„-	Խոտիք (Խատիք)	-„-	Մունուզոմ	-„-	Երկունի	-„-
Խանաձեա	-„-	Խոփերան (Ծոփերան)	-„-	Նաբի	-„-	Թընշման	-„-
Սալկորի	-„-	Ծարս (Զարս)	-„-	Հակոնիստ	-„-	Գաբուքիլիսէ	-„-
		Հակորզոմ	-„-			Իչաց	-„-
Խոշգյալրի	-„-	Հարսնեքար	-„-	Ղռշաքիլիսէ	-„-	Ջորերան	-„-
Խոշափանդ	-„-	Ցաղան	-„-	Գրզրլքիլիսէ	-„-	Շասեվան	-„-
Խոշգիլիսե	-„-	Քաշքեյոյու	-„-	Ալաքիլիսէ	-„-		
Արսոս	-„-	Կարաչուխա	-„-	Գարագուրուբ	-„-		
Յուզվերան[19]	-„-	Զասապխանե	-„-	Սեօքիւրլու[20]	-„-		

[16] ՀՍՀ, հ. 2, Ե.,1976, էջ 302:
[17] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139,թ. 45-48:
[18] ԳԱԹ ԳՍ, ֆ. 153, գ. 23, թ. 14: Տե՛ս նաև Է. Կոստանդյանի հրապարակումը (Քանքեր Հայաստանի արխիվների, 1976, № 2, էջ 65-66):
[19] Հայաստանի և հարակից շրջանների..., հ. 1,էջ 611, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ.34, մ. 2, 93, 193, 166, 242, 237, 258, 275, 278, 681, 683, 705, 794 և այլն:
[20] Նույն տեղում:

Ա-Դոն ամբողջ Բասենի գավառում գրանցել է 57 գյուղեր:[21] Համեմատելով մեր ունեցած ցուցակների հետ՝ պարզվում է, որ միայն 41 գյուղանուններ են նույնանում, մնացած 16-ը չեն հանդիպում ոչ մի ցուցակում: Այսինքն՝ մեր ունեցած 146 գյուղերին եթե գումարենք ևս 16, ստացվում է 162 գյուղ, որն անհնարին է ընդունել իբրև Բասենի գավառի գյուղերի ընդհանուր քանակ: Քանզի այն գրեթե հավասարվում է Ա-Դոյի գրանցած ամբողջ Կարինի գավառի գյուղերի քանակին, այսինքն՝ գավառի Էրզրումի, Բասենի, Խնուսի, Դերջանի, Քղիի, Բայբուրդի, Սպերի, Կիսկիմի գավառակների գյուղերի քանակին, որոնք, ըստ հեղինակի հաստատման, մտնում էին Կարինի սանջակի (գավառի) կազմի մեջ և հասնում էին 169-ի:[22]

Սակայն այստեղ ևս անկարելի է համաձայնել Ա-Դոյի վիճակագրության հետ, որովհետև նշված գավառակների հայության և գյուղերի թիվը ներկայացնելիս, ոչ թե խոստացած քանակը 169 է, այլ 289: Նույն պատկերն է նաև ժողովրդագրության բնագավառում: Մնում է ենթադրել, որ մեր ներկայացրած գյուղանունները, գյուղերի քանակը պարզելու համար անհրաժեշտ է կատարել թե՛ մանրակրկիտ վերլուծություն, թե՛ համեմատություն, թե՛ հիշատակված հեղինակների թվական տեղեկությունների աղբյուրների ճշտում, ստուգում: Այս անհամապատասխանության հիմնական պատճառն այն է, որ տարբեր հեղինակներ, որոնց անհայտ են եղել մյուսների ներկայացրած ցուցակները, ոչ թե գյուղերն արձանագրել են դրանց հետ համեմատություններով ու ճշգրտմամբ, այլ գրանցել են հանդիպած անունները և չեն հիշատակել անգամ նախկին անվանումը:

Բասենի գավառում բարձր հիմքերի վրա էր դրված դպրոցական գործը: Գրեթե բոլոր գյուղերում գործում էին դպրոցներ, որոնց ծախքերը հոգում էին կա՛մ գյուղերի բնակիչները, կա՛մ հովանավորները, կա՛մ կրթասիրաց ընկերությունները, կա՛մ եկեղեցին: Դժբախտաբար, թուրքական, հայահալած քաղաքականությունն իր ազդեցությունն ունեցավ նաև դպրոցական համակարգի վրա: Հայերի զանգվածային արտագաղթը, պանդխտությունը, կոտորածները ունեցան այն դերը, որ Գ. Սրվանձտյանցը 1879թ. գրում էր. «Հայ եղողը՝ Հայաստանի հողին վրայ ինքզինքը կը ճանաչէ, ինքզինքը վեհ և կենդանի կը գտնէ...», ստիպված էր արձանագրել, որ Բասենի գավառի միայն 26 գյուղերում կան եկեղեցիներ, ևս երեք եկեղեցի ավերված է՝ դպրոցները քանակը գրանցելով նույնպես 26:[23]

Մեր հիշատակած Անանուն հեղինակը ներկայացնում է ավելի ցնցող տեղեկություն: Նա հիշատակում է միայն 10 եկեղեցի, 5 դպրոց, որոնք նույնպես դադարել էին գործելուց:[24]

Իսկ մեկ այլ փաստաթուղթ, որը գտնվում է ԳԱԹ Գ. Սրվանձտյանցի ֆոնդում (ձեռագրի նմանությունը նկատի առնելով՝ գրված է մեծանուն հեղինակի կողմից) և վերնագրված է «Բասենու մէջ եղած աւերակ և շեն վանորայք և եկեղեցիք», հիշատակված 13 գյուղերից ոչ մեկում չի արձանագրվում հայություն, դրանք չերքեզաբնակ ու քրդաբնակ էին, բայց գյուղերում կային եկեղեցիներ ու վանքեր, որոնք գյուղերին տիրացած խաշնա-

---

[21] *Ա-Դ*, նշվ. աշխ., էջ 168:
[22] Նույն տեղում, էջ 173-174, 179, 180, 185, 187, 191, 192, 195, 197, 199:
[23] ԳԱԹ, ԳՍ, ֆ. 153, գ. 23, թ. 14:
[24] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5՝ գ. 139, թ.45:

ռած-քոչվորները լավագույն դեպքում վերածել էին բնակարանի, պահեստի և անասնագոմերի:[25]

Գավառի գյուղերի շարքում նշանավոր էր Ալվարը: Այն գտնվում էր Երասխի վտակ Մուրցի աջ ափին, բերրի դաշտավայրում, Հասան-Կալա քաղաքից 7 կմ հեռավորությամբ, նրա հարավ արևմտյան կողմում: Գյուղի մասին սկսած V դ. մեզ են հասել հիշատակություններ:

Գյուղը XIX դ. 70-ական թվականներին ունեցել է 154 հայ բնակիչ (22 տուն):[26] Արխիվային փաստաթղթերից մեկը հայանում է, որ գյուղը պատերազմից առաջ ունեցել է 300 շունչ հայ բնակիչ:[27] Գյուղն ունեցել է եկեղեցի, վարժարան: Գյուղացիները զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուղատնտեսությանը հատկապես նպաստում էր Աղբերականց անունով դաշտը, որը հայտնի էր իր բերրիությամբ:

Ալաճա (Ալա գիլիզե), գյուղը գտնվում էր Արտոսդ գետի ափին:

Այստեղ հատկապես նշանավոր էր սպիտակ և կարմիր քարերով կառուցված եկեղեցին, որն ուներ օրորոցաձև կառուցվածք: Եկեղեցին ավերվել է 1877-1878թթ. պատերազմական գործողությունների ժամանակ: Գյուղն ուներ 700 հայ բնակիչ, գործում էր Նարեկյան երկսեռ վարժարանը՝ 120 աշակերտներով:[28] Սկսած 1830թ. գյուղը դանդաղ դատարկվում էր, որովհետև թուրքական բռնատիրության հալածական քաղաքականությունը գնալով սաստկանում էր՝ հարցականի տակ դնելով հայության ֆիզիկական գոյությունը: Գաղթն առավել ուժեղացավ 1877-1878թթ. պատերազմից հետո: Հետևեցին 1894-1896թթ. ջարդերը, և նախկինում զուտ հայաբնակ գյուղը, վերջնականապես կորցնելով իր բնիկներին, դարձավ քոչվորների բնակատեղի:

Բլուր գյուղը գտնվում է Երասխի աջ ափին (հայտնի է նաև Բլուրս, Բլուրք, Պլուր անուններով): Այն պարսպապատված ու ամրացված բնակավայր է եղել: Սելջուկների արշավանքների ժամանակ Բլուրի շրջակայքի գյուղերից՝ Եփրատի կողմերի գյուղերից ու վանքերից, Արզն ավանից ժողովուրդը լցվում է Բլուր՝ պաշտպանվելու և փրկվելու համար: Բայց հեղեղի պես եկող զավթիչները խորտակում են պարիսպները և կոտորում 7000 մարդ: «Օհ. քանի՞ դառն է պատմութիւն», - գրում էր պատմիչը և ավելացնում՝ ... եւ մասնեալ եղաք ի ձեռս թշնամեաց մերոց...»[29]: Բլուրի գյուղացիները զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ, կային նաև արհեստավորներ ու առևտրականներ, հիմնականում՝ մանրավաճառներ: Գյուղում կար եկեղեցի՝ Ս. Գևորգ: XIX դ. վերջին գյուղն ուներ 16 տուն բնակչություն, որից վեցը՝ հայեր:[30] Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ գյուղում կար չորս տուն, 35 հայ բնակչություն:[31]

Էգեպատը (Էգեպար, Էգիպատ) ժամանակաշրջանի գավառի մեծ գյուղերից էր: Գյուղն ուներ եկեղեցի (Ս. Աստվածածին): Էգեպատի Հայկազյան վարժարանն ուներ 1500 լիրա հասույթ: Աշակերտների թիվը հաս-

---

[25] ԳԱԹ, ԳՍ, ֆ. 153, գ. 50, թ. 5-8:
[26] Հայաստանի և հարակից..., հ. 1,էջ 102:
[27] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139,թ. 45:
[28] Նույն տեղում, ֆ. 476, ց. 1, գ. 66,թ. 90:
[29] Պատմութիւն *Արիստակեսի Լաստիվերտցւոյ*, Ե., 1963, էջ 108. 110:
[30] Հայաստանի և հարակից..., հ.1,էջ 704:
[31] ԳԱԹ, ԳՍ, ֆ. 153, գ. 23, թ.14:

նում էր 70-ի:[32] XIX դ. երկրորդ կեսին գյուղն ուներ 85 տուն, 800 հայ բնակչություն: Ա-Դոյի հաշվումներով՝ 1909թ. գյուղն ունեցել է 103 տուն հայ բնակչություն: Զուտ հայաբնակ գյուղ էր:[33]

Իշխու (Իշիի, Իշխան, Իշխ, Իշխս, Իշխվա) գյուղը գտնվում է Երասխի Իշ վտակի ձախ ափին, Հասանկալա քաղաքից հարավ արևելք, 26 կմ հեռավորության վրա: Գյուղի անվան տարբերակների այսպիսի առատությունը բացատրվում է նրանով, որ հնագույն ժամանակներից սկսած, գյուղը երբեմն տեղի է տվել նվաճողներին, որոնք, հիմնավորվելով գյուղում, փոխել են նաև նրա անունը: Բայց ժամանակի ընթացքում հայությունը կարողացել է վտարել քոչվորներին, վերականգնելով (կամ մոտավորապես վերականգնելով) գյուղի իսկական անունը:

Գյուղն ուներ եկեղեցի (Ս. Հարություն), վարժարան, որտեղ սովորում էին 103 աշակերտներ:[34] XIX դ. երկրորդ կեսին գյուղը ունեցել է 83 տուն, 900 հայ բնակչություն:[35] Ա-Դոն հաշվում է 110 տուն:[36] Մեկ այլ հեղինակ գտնում է, որ XX դ. սկզբներին գյուղը ուներ 150 տուն բնակչություն:[37]

Ալիճեկրէկ (Ալի-Ճեքրէկ, Ալուճակրագ, Ալիճակրագ, Արուճակրագ) գյուղը գտնվում է Երասխի վտակ Ալիճա գետի հովտում: Գյուղը հայտնի է իր ընտիր ցորենով: Գյուղացիների հիմնական զբաղմունքն էին երկրագործությունը և անասնապահությունը: Հողագործությամբ զբաղվում էին 220 մարդ,10 հոգի արհեստավորներ էին:[38] Գյուղում կար եկեղեցի (Ս. Աստվածածին), վարժարան, որի հասույթը կազմում էր 2000 լիրա: Վարժարանում սովորում էին 100 աշակերտներ:[39] Գյուղը XIX դ. երկրորդ կեսին ուներ 93 տուն, 1050 հայ բնակչություն:[40] Մեկ այլ արխիվային փաստաթուղթ բնակչության թիվը հաշվում է 1000 շունչ:[41] 1878թ. գյուղում 560 բնակիչ է հաշվում մեկ այլ հեղինակ:[42] Ա-դոն վկայում է XX դ. սկզբին գյուղում 110 տուն հայ բնակչության գոյության մասին:[43]

Գոմաձոր գյուղը գտնվում էր Հասանկալա-Բայազետ ճանապարհի վրա, Երասխի աջակողմյան վտակներից մեկի հովտում, Խորասան գյուղից հարավ-արևմուտք: Գյուղում հիմնական զբաղմունքներն էին երկրագործությունը, և անասնապահությունը: 100 հոգի հողագործներ էին, 5 հոգի՝ արհեստավորներ:[44] Գյուղն ուներ եկեղեցի (Ս. Աստվածածին) և վարժարան՝ 1000 լիրա հասույթով:[45] Գյուղի 1200 շունչ բնակչությունից 300-ը եկվոր հայեր էին:[46] Գ. Սրվանձտյանցը հաշվում է 82 ընտանիք, 900 շունչ

---

[32] Նույն տեղում:
[33] *Ա-Դռ*, նշվ. աշխ., էջ 179:
[34] ԳԱԹ, ԳՍ, ֆ. 153, գ. 23, թ.14:
[35] Նույն տեղում:
[36] *Ա-Դռ*, նշվ. աշխ., էջ 179:
[37] Հայաստանի և հարակից շրջանների..., հ. 2, Ե., 1988, էջ 531:
[38] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 45:
[39] ԳԱԹ, ԳՍ, ֆ. 153, գ. 23, թ.14:
[40] Նույն տեղում:
[41] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 45:
[42] Հայաստանի և հարակից..., հ. 1, էջ 86:
[43] *Ա-Դռ*, նշվ. աշխ., էջ 179:
[44] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց.5, գ. 139, թ. 45:
[45] ԳԱԹ, ԳՍ, գ. 23, թ. 14:
[46] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց.5, գ. 139, թ. 45:

հայ բնակչություն,[47] Ա-Դոն ընդունում է 160 տուն հայերի գոյությունը:[48] Իսկ այլ հեղինակի վկայությամբ, 1914թ. գյուղում կար 200 տուն հայ բնակչություն:[49]

Գավառի տասնմեկ ամենահայաշատ գյուղերից մեկը Հերքևն էր: Գյուղացիները զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Կային նաև առևտրականներ: Գ. Սրվանձտյանցի վիճակագրությամբ XX դ. II կեսին գյուղն ունեցել է 80 տուն, 750 հայ բնակչություն:[50] Ա-Դոն գյուղում հաշվում է 133 ընտանիք հայ բնակչություն,[51] մոտավորապես 1300 մարդ: Գյուղում կար Ս. Աստվածածին անունով եկեղեցի, Արեղյան վարժարան՝ 1000 լիրա հասույթով, որը գոյանում էր հանգանակության միջոցով: Դպրոցում սովորում էին 30 աշակերտներ:[52]

Վելիքաբա (Տելիպապա, Դելիքաբա) գյուղը գտնվում էր Բասենի արգավանդ դաշտում: Գյուղի հարավ արևմտյան մասում հին ժամանակներից գոյություն է ունեցել սրբատեղի-մատուռ, որի անունն էլ տարածվել է գյուղի վրա: Գյուղացիները, օգտվելով հողի բերրիությունից, զբաղվում էին նաև պտղաբուծությամբ, բոստանային կուլտուրաների աճեցմամբ ու վաճառքով: 200 հոգի զբաղվում էին երկրագործությամբ,[53] հայ բնակչության մնացած մասը՝ անասնապահությամբ: Գյուղում կար Ս. Սարգիս անունով եկեղեցին, վարժարան, որն ուներ 2000 լիրա հասույթ: Վարժարանում սովորում էին 100 աշակերտներ:[54] Գ. Սրվանձտյանցի հաշվումներով, գյուղում ապրում էր 93 ընտանիք՝ 1050 հայ բնակչությամբ:[55] Արխիվային մեկ այլ փաստաթուղթ XIX դ. II կեսին հայերի քանակը հաշվում է 1000 շունչ, որից 500-ը՝ տեղացի:[56] Ա-Դոն գրանցում է 134 ընտանիք հայեր, ՀՍՀ հեղինակը 1914թ. տվյալներով ընդունում է 1500 հայերի գոյությունը:[57]

Ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս գավառները, այնպես էլ Բասենի գավառն իր տանջալից ժամանակները ապրեց 1877-1878թթ. պատերազմից հետո: Թուրք բաշիբոզուկները, խուժանը, բանակը, ոստիկանությունը, իշխանավորները պատերազմի պատճառով իրենց կրած վնասները լրացնում էին հայության հաշվին: «Մշակ» թերթում տպագրված մի նամակում նկարագրելով այդ ծանրագույն կացությունը՝ նամակագիրը եզրափակում է. «1877-ին հայերու հագուստները կը կողոպտվեին և կողոպտողները քուրդերն էին, իսկ 1879-ին ոսկի և արծաթ զարդերը կը կողոպտվեին և կողոպտողը կառավարությունն է»[58]:

---

[47] ԳԱԹ, ԳՍ, գ. 23, թ. 14:
[48] *Ա-Դո*, էջ 179:
[49] ՀՍՀ, հ. 3, Ե., 1977, էջ 152:
[50] ԳԱԹ, ԳՍ, գ. 23, թ. 14:
[51] *Ա-Դո*, էջ 179:
[52] ԳԱԹ, ԳՍ, գ. 23, թ. 14:
[53] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 45:
[54] ԳԱԹ, ԳՍ, գ. 23, թ. 14:
[55] Նույն տեղում:
[56] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 45:
[57] ՀՍՀ, հ.11, Ե., 1985, էջ 360:
[58] Մշակ, 1879, № 79:

Հալածական այդ վիճակը եզրափակվեց կոտորածներով, երբ արևմտահայությունը ոտք դրեց իր պատմության ամենառողբերգական ժամանակահատվածը:

ПРОВИНЦИИ КАРИНСКОГО УЕЗДА
(Басенская провинция)

О. Г. ЗАТИКЯН

Р е з ю м е

Басенский уезд граничит с Эрзрумской равниной. Его границы простираются до Восточной Армении. На его се— вере находится Туртум, на юге—Сасун и Алашкерт.

Климат уезда равнинный, земля плодородная, здесь с запада на восток протекает река Ерасх (Аракс).

Уезд делится на две части—Верхний и Нижний Басены.